նացնելու, որովհետև մէկը Հասանայ որդի է, միւսը Վասակայ, ինչպէս Ուռհայեցին գիտէ նրանց զանազանութիւնը. իսկ Վարդան եւ Այրիվանեցին վանքի հիմնադիր համարում են Հասանայ որդի Ապիրատին. այս վերջին դժուարութիւնը հեշտ է լուծել և նոյնացնել Հասանայ որդի Գրիգորին և Հասանայ որդի Ապիրատին, երբ յիշենք, որ Պահլաւունիների մէջ Գրիգոր–Ապիրատ երկանունը սովորական էր։

Ճարտարապետական մնացորդները համեմատելով արձանագրութիւնների տուած տեղեկութեան հետ, աւելի ևս պարզւում է խնդիրը. Propaganda fide-ի արձանագրական պատճէնի համաձայն Վասակի որդի Գրիգոր մագիստրոսը շինել է մի եկեղեցի «հանդերձ մատրամբ». ԺԳ. դարից կամ Խաղբակեան Վասակի տիրապետութիւնից առաջ(*), կեչառիսում մնացած են երկու շէնքեր, տաճարը եւ Ս. Նշան մատուռը, որի հիմնարկութեան մասին թէև չունինք արձանագրութիւն, բայց ճարտարապետական նշաններից դատելով ԺԱ. դարի գործ պիտի լինի. յամենայն դէպս 1163 թուից հիւսիսային պատին Վարդըմբելի արձանագրութիւնն ունինք (Ցաւել. Ա. 40), ինչպէս և պատրոն Վարդինը հայր Պետրոսի անուան յիշատակութեամբ, որ ինչպէս կը տեսնենք ապրում էր այդ ժամանակները (Ցաւել. Ա. 41). ՌՀԲ = 1223 թ. նորոգութեան է ենթարկուել Վաչէ պատրոնի ձեռքով (Ցաւել. Ա. 44)։ Սելջուկեան հարուածների տակ Հայաստանում շինարարութիւնը կանգ էր առել, գրեթէ, ԺԱ. դարի կէսերից մինչեւ ԺԲ.ի կէսերը, դեռ մի քիչ էլ աւելի. այս շրջանից շատ չնչին են արձանագրութիւնները կամ նրանց մէջ յիշատակուած շինարարութիւնը. նոյնը կարող ենք ասել եւ գրչութեան արուեստի նկատմամբ։ Յատկապէս Կեչառիսի մասին տեղեկութիւն ունինք, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ, որ նա խրթնացած էր առաջին պայծառութիւնից յետոյ՝ մինչեւ հայր Պետրոսի առաջնորդութիւնը՝ ԺԲ. դարի վախճանական թուականները. ապա ուրեմն այս մատուռի ծագումը կարող ենք առանց տատանուելու տանել մինչեւ ԺԱ. դարի կէսերը, այսինքն այն ժամանակ, երբ այդպիսի մի մատրան շինութեան մասին յիշատակութիւն ունինք Գրիգոր մագիստրոսի ձեռքով։



Գաւիթ 124.

Մնում է պարզել մեծ տաճարի խնդիրը, Գրիգոր–Ապիրատ՞ն է այն, թէ Վասակայ որդի Գրիգոր մագիստրոսինը։ Ս. Նշանի մատրան եւ ժամատան շատ արձանագրութիւնների համեմատ մեծ տաճարը նուիրուած էր Լուսաւորչի անուան, եւ որովհետեւ Վասակայ որդի Գրիգոր մագիստրոսի արձանագրութեան պատճէնի համաձայն նորա շինած եկեղեցին Լուսաւորչի անունով էր, պէտք է եզրակացնել, որ ներկայ տաճարը, որին և կցուած է ժամատունը, նորա շինածն է։ Ըստ այսմ Հասանայ որդի Գրիգոր–Ապիրատի շինած եկեղեցուց ոչինչ չէ մնացել, ՆՁԲ թուականով արձանագրութիւնն էլ սկզբնական չէ, գուցէ, հէնց այդ արտագրութեան ժամանակ էլ կատարուել է թուականի տասնաւորի շփոթութիւնը։ Ուղղագրական եւ հնագրական որոշ փաստեր համոզում են մեզ, որ երկու արձանագրութիւնն էլ միաժամանակ են գրուած, երկու արձանագրութիւնների մէջ եւս յատուկ անունների սեռականը յ չունի, մի տեղ միայն մեծ արձանագրութեան մէջ՝ «Գրիգորոյ» բառի մէջ շեղումն կայ, մինչդեռ նոյն բառը երկու տեղ յ չունի։ Երկու արձանագրութեան մէջ ևս «Գրիգոր մագիստրոս» գրուած է նոյն լիգատուրայով և նոյն արտասանութեամբ. մի հանգամանք, որ շատ նշանակալից է, որովհետեւ սովորական չլինելով, այստեղ կրկնուած է երկու տեղումն էլ։ Յատկապէս ուշադրութեան արժանի է ո և ր

(*) Խաղբակեանք կամ Պռոշեանք Դ. գլուխ։